ՄԱՐԶԻ ԱՅՐՔ, ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԵՎ ՄԱԴԻՆԱ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 624 որոշման 14 կետի պահանջները

որոշում եմ՝

1. Այրք համայնքում քաղաքաշինական գործունեության պլանային ստուգումների արդյունքում հանձնաժողովի կազմած արձանագրություններն ընդունել ի գիտություն:
2. Առաջարկել Կարմիրգյուղ համայնքի ղեկավարին /Մ.Դանիելյան/՝
   1) սահմանված կարգով դադարեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի օգոստոսի 30-ի N 479 և 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմների պահանջների խախտումով 2010թ. դեկտեմբերի 24-ի որոշումով<<Արմենթել>> ՓԲԸ տրված հողատարածքի վրա բջջային կապի շարժական կայանի շինարարությունը, շահագործումը և այն թույլատրել միայն սահմանված կարգով հողի նպատակային նշանակության փոփոխման ու սահմանված կարգով շինարարության թույլտվության դեպքում.
   2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշման 10-րդ կետի պահանջների համաձայն յուրաքանչյուր շինարարության թույլտվության և ավարտական ակտի կրկնօրինակները սահմանված ժամկետում ներկայացնել մարզպետին:
3. Առաջարկել Մադինա համայնքի ղեկավարին /Վ.Սարգսյան/՝ հատուկ ուշադրություն դարձնել ինքնակամ շինարարության կանխման գործառույթների իրականացմանը և բացառել առանց Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ սահմանված կարգով տրված թույլատրված շինարարարական աշխատանքները:
4. Առաջարկել Կարմիրգյուղ համանքի ղեկավարին՝ որոշման կատարման մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին 15-օրյա ժամկետում:
5. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Դ.Հովհաննիսյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ն.ՊՈՂՈՍՅԱՆ